ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆԲԸԱՀԾՁԲ-17/11

ք. Երևան «23» 03 2017թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Զանգակ-97» ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ Ս. Մկրտչյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Կատարող/ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել շտեմարանների տպագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել N 1 և N 2 հավելվածներին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 11505000 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայն սույն Պայմանագրի հավելված N 3-ով սահմանված վճարման ժամանակացույցի:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն ք.Երևան, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005122 ՀՎՀՀ 02512868 Նախարարության աշխատակազմի ղեկավար՝ ---------- Ն.Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ.	<<Զանգակ-97>> ՍՊԸ ք. Երևան, Վարդանանց փակ. 8 Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան Հ/Հ 217001040013001 ՀՎՀՀ 00830786 Տնօրեն՝ ---------- Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.

23 03 Հավելված 1
«» «» 2017թ կնքված
ՀՀԿԳՆԲԵԱՀԾՁԲ-17/14 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկա են հանդիսանում շտեմարանների տպագրման ծառայությունները /այսուհետ՝ Ծառայություն/

Ծառայությունը նախատեսում է ներքոնշյալ շտեմարանների տպագրումը.

Հ/Հ	Անվանում	Հեղինակներ	Տեխնիկական հատկանիշներ				
			Չափը	Էջերի քանակը	Գույնը	Կազմի գույնը	Թուղթը
1	<<Հայոց պատմություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան) (մաս 1)	հեղինակներ՝ Ա.Մելքոնյան, Ա.Նազարյան, Է.Գևորգյան, Է.Մինասյան և ուրիշներ	70X100 1/16	468	1	4	օֆսեթ 1,70գ/մ2
2	<<Հայոց պատմություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան) (մաս 2)	հեղինակներ՝ Ա.Մելքոնյան, Ա.Նազարյան, Է.Գևորգյան, Է.Մինասյան և ուրիշներ	70X100 1/16	392	1	4	օֆսեթ 1,70գ/մ2
3	<<Հայոց պատմություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան) (մաս 3)	հեղինակներ՝ Ա.Մելքոնյան, Ա.Նազարյան, Է.Գևորգյան, Է.Մինասյան և ուրիշներ	70X100 1/16	320	1	4	օֆսեթ 1,70գ/մ2

1-3 կետերի համար

Ելքային տեղեկությունները — Հայաստանի Հանրապետության կառավարության 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված <<Հրատարակություն, ելքային տեղեկություններ>> ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում — Կազմի վրա, տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝<<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:

Փոխադրումը և բեռնաթափումը — Կատարողի կողմից, համաձայն կից բաշխման ցուցակի:

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ս. Մկրտչյան

Հավելված 2
«23» «03» 2017թ. կնքված
N ՀՀԿԳՆԲԸԱՀԾՁԲ-17/11 գնման պայմանագրի

Գնման ժամանակացույց

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը, հազ.դրամ	Ենթակա է գնման 2017թ 2-րդ եռամսյակ՝ մինչև ապրիլի 10-ը		Ընդամենը	
				քանակը	գումարը, հազ.դրամ	քանակը	գումարը, հազ.դրամ
1	2	3	4	7	8	9	10
	Շտեմարանների տպագրման ծառայություններ, այդ թվում						
1	<<Հայոց պատմություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան) (մաս 1)	հատ	2,95	1300	3835,0	1300	3835,0
2	<<Հայոց պատմություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան) (մաս 2)	հատ	2,95	1300	3835,0	1300	3835,0
3	<<Հայոց պատմություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան) (մաս 3)	հատ	2,95	1300	3835,0	1300	3835,0
	Ընդամենը				**11505,0**		**11505,0**

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ս. Մկրտչյան

Հավելված 3
«23» «03» 2017թ կնքված
N ՀՀԿԳՆԲԸԱՀԾՁԲ-17/ 11 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Ենթակա է վճարման << 2017թվականի պետական բյուջեի՝ <<Ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերում>> ծրագրից, ընդ որում՝												
		1-ին եռամսյակ			1-ին կիսամյակ			9 ամիս			տարի			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր /Մինչև դեկտեմբերի 25-ը/	
Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ, այդ թվում՝ շտեմարանների տպագրման ծառայություններ	4263				11505,0	11505,0	11505,0	11505,0	11505,0	11505,0	11505,0	11505,0	11505,0	11505,0

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ս. Մկրտչյան

Բաշխման ցուցակ

<<Հայոց պատմություն>> առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարանների

Հ/հ	Մարզի անվանումը, դպրոցները	<<Հայոց պատմություն>> /Մաս 1/	<<Հայոց պատմություն>> /Մաս 2/	<<Հայոց պատմություն>> /Մաս 3/	Նշումներ
1	**Երևան՝**	40	40	40	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն
2	**Արագածոտն՝**				ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	94	94	94	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	6	6	6	
3	**Արարատ՝**				ՀՀ Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	100	100	100	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	10	10	10	
4	**Արմավիր՝**				ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	108	108	108	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	12	12	12	
5	**Գեղարքունիք՝**				ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	114	114	114	
	ԿԳՆ ենթակայության	16	16	16	
6	**Լոռի՝**				ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	114	114	114	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	26	26	26	
7	**Կոտայք՝**				ՀՀ Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	66	66	66	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	24	24	24	
8	**Շիրակ՝**				ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	136	136	136	
	ԿԳՆ ենթակայության	34	34	34	
9	**Սյունիք՝**				ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	90	90	90	
	ԿԳՆ ենթակայության	10	10	10	
10	**Վայոց Ձոր՝**				ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	64	64	64	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	6	6	6	

11	**Տավուշ՝** *Միջնակարգ դպրոցներ*	72	72	72	ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	8	8	8	
12	ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցներ	150	150	150	**Համաձայն կից ցուցակի**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1300**	**1300**	**1300**	

Պատվիրատու

Ն. Հարությունյան

(ստորագրություն) Կ.Տ.

Կատարող

Ս. Մկրտչյան

(ստորագրություն) Կ.Տ.

Ցուցակ
<<Հայոց պատմություն>> առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարանների
/ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցներ/

N	Դպրոցը	Հասցեն	Հեռախոս	<<Հայոց պատմություն>> /Մաս 1/	<<Հայոց պատմություն>> /Մաս 2/	<<Հայոց պատմություն>> /Մաս 3/
1.	թիվ 2 ավագ դպրոց	Կենտրոն, Տիգրան Մեծի 34	569105,	5-ական	5-ական	5-ական
2.	ԵՃՇՊՀ-ի Մ. (թիվ 3 ավագ դպրոց)	Կենտրոն, Խանջյան 9,	567573	6-ական	6-ական	6-ական
3.	թիվ 16 ավագ դպրոց	Էրեբունի, Բուռնազյան 37	572680	2-ական	2-ական	2-ական
4.	թիվ 29 ավագ դպրոց	Կենտրոն, Սարյան 23,	58327	6-ական	6-ական	6-ական
5.	<<Հերացի ավագ դպրոց>>	Քանաքեռ-Զեյթուն, Հր.Ներսիսյան 3	285360	6-ական	6-ական	6-ական
6.	թիվ 42 ավագ դպրոց	Կենտրոն, Մաշտոցի 5/2,	535641,	3-ական	3-ական	3-ական
7.	թիվ 43 ավագ դպրոց	Էրեբունի, Նոր Արեշ 9/53	450730,	2-ական	2-ական	2-ական
8.	թիվ 46 ավագ դպրոց	Շենգավիթ, Մանանդյան 3,	445301,	2-ական	2-ական	2-ական
9.	թիվ 54 ավագ դպրոց	Արաբկիր, Ն.Տիգրանյան 12	231891,	3-ական	3-ական	3-ական
10.	թիվ 62 ավագ դպրոց	Նոր-Նորք 1-ին զանգ., Նանսենի 6,	634520	3-ական	3-ական	3-ական
11.	թիվ N 65 ավագ դպր.	Շենգավիթ,Ֆրունզե 56	480922,	3-ական	3-ական	3-ական
12.	թիվ 83 ավագ դպրոց	Արաբկիր,Օրբելի 63,	227441,	3-ական	3-ական	3-ական
13.	թիվ 94 ավագ դպրոց	Աջափնյակ, Բաշինջաղյան 100,	398920,	2-ական	2-ական	2-ական
14.	թիվ 97 ավագ դպրոց	Ներքին Շենգավիթ 12փ.,	481091,	2-ական	2-ական	2-ական
15.	թիվ 103 ավագ դպրոց	Քանաքեռ-Զեյթուն, Սարկավագի 14,	284685:	2-ական	2-ական	2-ական
16.	թիվ 105 ավագ դպրոց	Մալաթիա-Սեբաս., Օտյանի 45,	736391	3-ական	3-ական	3-ական
17.	թիվ 109 ավագ դպրոց	Աջափնյակ, Մարգարյան 2-րդ նրբ.,14	340944	2-ական	2-ական	2-ական
18.	թիվ 112 ավագ դպրոց	Սեբաստիա-84,	774646,	3-ական	3-ական	3-ական
19.	թիվ 114 ավագ դպրոց	Կենտրոն, Հանրապետության 73.	527412,	3-ական	3-ական	3-ական
20.	թիվ 115 ավագ դպրոց	Շենգավիթ,Շիրակի 72/1	423322,	2-ական	2-ական	2-ական

21.	թիվ 118 ավագ դպրոց	Աջափնյակ, Արզումանյան 8	391070	3-ական	3-ական	3-ական
22.	թիվ 119 ավագ դպրոց	Էրեբունի, Տիգրան Մեծի 64,	573740,	4-ական	4-ական	4-ական
23.	թիվ 127 ավագ դպրոց	Քանաքեռ-Զեյթուն, Պ.Սևակի 11,	281332,	2-ական	2-ական	2-ական
24.	թիվ 139 ավագ դպրոց	Նոր-Նորքի 2-րդ զանգ. Ն.Ստեփանյան3	635570	2-ական	2-ական	2-ական
25.	թիվ 142 ավագ դպրոց	Նոր–Նորքի 4-րդ զանգ Գյուլիքեխվյան3	635950	2-ական	2-ական	2-ական
26.	թիվ 148 ավագ դպրոց	Արաբկիր, Սունդուկյան 78,	227366	3-ական	3-ական	3-ական
27.	թիվ 149 ավագ դպրոց	Արաբկիր, Հովսեփ Էմինի 8,	237220,	2-ական	2-ական	2-ական
28.	թիվ 159 ավագ դպրոց	Նոր –Նորք,Նորքի 5-րդ զանգ.,	641133,	2-ական	2-ական	2-ական
29.	թիվ 170 ավագ դպրոց	Ավան, Թումանյան 3,	,610930	3-ական	3-ական	3-ական
30.	թիվ N 182 ավագ դպրոց	Կենտրոն, Կրիվոյի 55,	540010,	2-ական	2-ական	2-ական
31.	թիվ 184 ավագ դպրոց	Մալաթիա-Սեբաս., Շերամի 91ա,		4-ական	4-ական	4-ական
32.	թիվ 189 ավագ դպրոց	Դավիթաշեն 1-ին թաղ., Տիգրան Մեծի 1	369220,	3-ական	3-ական	3-ական
33.	թիվ 190 ավագ դպրոց	Մալաթիա-Սեբաս., Հ/Ա Բ-2 թաղ ,	722160	5-ական	5-ական	5-ական
34.	թիվ 195 ավագ դպրոց	Աջափնյակ, Մ.Մազմանյան 5ա,	342400,	4-ական	4-ական	4-ական
35.	թիվ 198 ավագ դպրոց	Նոր Նորքի 9 զ.13/1,	667250,	5-ական	5-ական	5-ական
36.	<<Մխիթար Սեբաստացի>> կրթ.	Մալաթիա-Սեբաստ., Հ-Ա Բ-1 թաղամաս	741112,	3-ական	3-ական	3-ական
37.	<<Օլիմպոս>> կրթ.	Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 6	650702	3-ական	3-ական	3-ական
38.	Հայկ. պետ. մանկ. համալ.ավագ դպր.	ք. Երևան, Խանջյան 13	522533,	4-ական	4-ական	4-ական
39.	ՀՊՃՀ ավագ դպրոց	ք.Երևան,Տերյան 105, 5-րդ մասնաշենք	520630,	6-ական	6-ական	6-ական
40.	ՀԱԱՀ ավագ դպր.	ք. Երևան, Կորյունի 19	524359,	3-ական	3-ական	3-ական
41.	Վ.Թեքեյանի անվ. թիվ 92 դպրոց	ք.Երևան, Սեբաստիա 84	777175,	2-ական	2-ական	2-ական
42.	Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոց	ք.Երևան, Ազատութ. պող., 2-րդ նրբ. 9	201310,	4-ական	4-ական	4-ական
43.	Անանիա Շիրակացի ճեմարան	ք. Երևան, Նոր Նորքի 5-րդ զանգվ. Միկոյան 35	640102,	3-ական	3-ական	3-ական
44.	Երաժշտական թիվ 13	ք. Երևան, Ծովակալ Իսակովի 13	581894	1-ական	1-ական	1-ական

	հատուկ դպրոց					
45.	Չայկովսկու երաժշ. միջնակարգ դպրոց	ք.Երևան, Կողբացի 36	532232	1-ական	1-ական	1-ական
46.	Մ.Մելքոնյանի ռազ-մարզակ. վարժարան	pn.monte@mil.am	353914	2-ական	2-ական	2-ական
47.	Վ. Թոթովենցի անվ. N57 հիմնակ. դպրոց	ք.. Երևան, Ագաթանգեղոսի 7ա	527826	1-ական	1-ական	1-ական
48.	Օլիմպ. հերթափոխի պետ. Մարզ. քոլեջ	Արամ Մանուկյան 31	773430	1-ական	1-ական	1-ական
49.	Պարարվեստի պետական քոլեջ	Երևան, Բայրոնի 5	564426	1-ական	1-ական	1-ական
50.	Երևանի տես. խանգ. ունեցող երեխաների N 14 հատուկ դպրոց	ք. Երևան, Մամիկոնյանց 31	235000,	1-ական	1-ական	1-ական
51.	Երևանի լսող.խանգ. ունեցող երեխաների հատուկ կրթահամ.	ք. Երևան Նորքի այգիներ - 193	651050,	1-ական	1-ական	1-ական
52.	Երևանի N 16 հատուկ դպրոց	ք. Երևան, Աղի հանք, Աճառյան 40	612840,	1-ական	1-ական	1-ական
53.	Երևանի հենաշարժ. խախտ. ունեցողների N 17 հատուկ դպրոց	ք. Երևան, Մոլդովական 41	646601,	1-ական	1-ական	1-ական
54.	Հանրապետական N 1 հատուկ կրթահամ.	ք. Երևան, Վարդաշեն, 6-րդ փող. 2	451421,	1-ական	1-ական	1-ական
55.	Հանրապետական N 2 հատուկ կրթահամ.	ք. Երևան, Ռաֆֆու 113	74-22-06	1-ական	1-ական	1-ական
		ԸՆԴԱՄԵՆԸ՝		**150**	**150**	**150**

Պատվիրատու՝

---------- Ն. Հարությունյան

(ստորագրություն) Կ.Տ.

Կատարող

---------- Ս. Մկրտչյան

(ստորագրություն) Կ.Տ.